



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓԱՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ  
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ  
(AMICUS CURIAE) № 14/16**

26.12.2016թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն),

քննարկելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՕ-247-Ն)<sup>1</sup> 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

Քաղաքացի Աղասի Տեր-Եսայանը (այսուհետ՝ Դիմող, ներկայացուցիչներ՝ Կարեն Մեժլումյան, Զարուհի Հայրապետյան) 01.09.2016թ. անհատական սահմանադրական դիմումով ՀՀ Սահմանադրական դատարանից խնդրել են որոշել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ., ՀՕ-ՀՕ-247-Ն) 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 1-ին, 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածներին և ՀՀ Սահմանադրության (27.11.2005թ. փոփոխություններով) 92-րդ հոդվածին համապատասխանության հարցը:

Դիմողը գտնում է, որ դատարանների կողմից իր նկատմամբ կիրառված՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասում առկա «դատարանի վճռով» արտահայտությունը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին: Այն չի համապատասխանում օրենքի որակի չափանիշին, քանի որ ձևակերպված է ոչ բավարար հստակությամբ, ինչպես նաև իրավական բաց պարունակելու պատճառով դրանում ամրագրված չէ անհրաժեշտ փաստակազմ՝ կարճման վճիռ արտահայտությունը, որը հնարավորություն կտար իրավակիրառողին

<sup>1</sup> Տե՛ս ՀՀՊՏ 1998.09.09/20(53):

կարճման վճռի առկայության պայմաններում կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը:

Դիմողի դիրքորոշմամբ՝ օրենսդիրը պարտավոր էր հստակեցնել, թե «դատարանի վճռով» արտահայտության մեջ «վճիռ» բառը վերաբերում է միայն հայրը բավարարելուն կամ մերժելուն, թե նաև կարճման դեպքերին: Օրենսդրի կողմից «դատարանի վճռով» արտահայտությունն իր անհստակության պատճառով դիմումատուին հնարավորություն չի տալիս կանխատեսելու իր գործողությունները և իր վարքագիծը կարգավորելու այդ նորմին համապատասխան, իսկ իրավակիրառողը հաշվի առնելով օրենսդրական բացը՝ հնարավորություն է ստանում այդ նորմին տալ այնպիսի մեկնաբանություն, որն հանգեցնում է *res judicata* սկզբունքի, ինչպես նաև անձի արդար դատական քննության իրավունքի խախտմանը:

Անդրադառնալով ՀՀ քաղ. դատ. օր. 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին՝ Դիմողը գտնում է, որ ՀՀ դատարանների կողմից իր նկատմամբ կիրառված քաղաքացիադատավարական նշված նորմում առկա «կատարելով համեմատական վերլուծություն» արտահայտությունը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, որն իր հերթին իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է տարաբնույթ և լայնարձակ մեկնաբանության՝ հանգեցնելով դատական պաշտպանության արդյունավետ միջոցի և անձի արդար դատաքննության իրավունքի խախտմանը:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավանորմում օրենսդիրը չի հստակեցրել և կոնկրետացրել, թե որոնք են համեմատական վերլուծություն կատարելու համապատասխան պայմանները և չափանիշները: Օրենսդրի կողմից «համեմատական վերլուծություն» կատարելու չափանիշի, կարգի, պայմանի բացակայությունը իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է այդ նորմի վերաբերյալ կամայական և տարածական մեկնաբանության:

Բացի այդ, Դիմողի կարծիքով՝ վիճարկվող իրավանորմում «համեմատական վերլուծություն» արտահայտության որոշակի, մատչելի ու բավարար ճշտությամբ նշված չլինելը հնարավորություն չի տալիս անձին դրանց համապատասխանեցնել իր վարքագիծը և դատական կարգով արդյունավետ պաշտպանել իր սահմանադրական իրավունքները:

Ուստի, դիմողը խնդրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի, 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 1-ին, 61-րդ, 63-րդ, 79-րդ հոդվածներին և ՀՀ Սահմանադրության (27.11.2005թ. փոփոխություններով) 92-րդ հոդվածին հակասող և անվավեր:

## ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

### ա) Իրավական որոշակիության սահմանադրական սկզբունք

Վիճարկվող նորմերի սահմանադրականությունը պետք է առաջին հերթին քննարկման առարկա դարձնել իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

Այսպես, իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքն իր ամրագրումն է գտել ՀՀ Սահմանադրության (06.12.2015թ. փոփոխություններով) 79-րդ հոդվածում, որի համաձայն՝

#### **Հոդված 79. Որոշակիության սկզբունքը**

*Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:*

ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի՝ իրական որոշակիության սկզբունքին**<sup>1</sup>

«**Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը**: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները**: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:<sup>1</sup>

Սույն գործով անհատական սահմանադրական դիմումով վիճարկվող քաղաքացիադատավարական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

**Հոդված 52. Ապացուցելուց ազատվելու հիմքերը**

...

2. Նախկինում քննված՝ քաղաքացիական գործով օրինական ուժի մեջ մտած դատարանի վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

**Հոդված 231. Վճռաբեկ բողոքի բովանդակությունը**

2. Վճռաբեկ բողոքը սույն օրենսգրքի 234 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով ներկայացնելու դեպքում բողոքը բերած անձը պետք է հիմնավորի, որ դրա վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառության ապահովմանը, մասնավորապես վճռաբեկ բողոքում հիմնավորելով, որ՝

4) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը՝ կցելով այդ դատական ակտերը և մեջբերելով դրանց հակասող մասերը՝ կատարելով համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ...:

Վիճարկվող 231-րդ հոդվածի հետ անմիջականորեն կապված քաղաքացիադատավարական նորմը՝ 234-րդ հոդվածը, որի վրա հղում է արվում ՀՀ քաղ. դատ. օր. 231-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետում, սահմանում է.

**Հոդված 234. Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը**

<sup>1</sup> ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

1. Վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ՝

1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար.

Հայտնի է, որ ընդհանրապես գործի վարույթի կարճումը գործի քննության ավարտի եղանակներից մեկն է, որի պարագայում ավարտվում է գործի վարույթը, և եզրափակվում են բոլոր դատավարական գործողությունները՝ առանց բավարարման թողնելով իր ենթադրաբար խախտված իրավունքների պաշտպանության խնդրանքով դատարան դիմած անձի պահանջը:

**Գործի վարույթի կարճումը գործի քննությունն ավարտելու ձև է, որը պայմանավորված է հայցվորի (դիմողի) մոտ դատարան դիմելու իրավունքի բացակայության կամ քաղաքացիական գործը հարուցվելուց հետո՝ վեճը վերանալու հիմքերով և արգելակում (բացառում) է նույնական հայցով կրկին անգամ դատարանին դիմելը:**<sup>1</sup>

Ընդ որում, բազմիցս հայտնի է, որ գործի վարույթի կարճումը, ինչպես և հայցը (դիմումը) մերժելու կամ բավարարելու մասին դատարանի վճիռը գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ է, որը դատավարական օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է բողոքարկվել վերադաս դատական ատյանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասը, ի տարբերություն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի, սահմանում է, որ **գործի վարույթը կարճելու մասին** դատարանը կայացնում է **վճիռ** (այլ ոչ թե որոշում):

Ըստ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի՝ **վեճն ըստ էության լուծելու դեպքում** դատարանը կայացնում է **վճիռ**:

ՀՀ քաղ. դատ. օր. 124-րդ, 131-րդ, 132-րդ հոդվածների վերլուծությունն էլ ցույց է տալիս, որ քաղաքացիական դատավարությունում դատարանի վճիռը, այդ թվում՝ գործի վարույթը կարճելու մասին, դատական ակտի այնպիսի տեսակ է, որով ավարտվում, եզրափակվում է վեճի քննությունը և գործը լուծվում է ըստ էության:

ՀՀ քաղ. դատ. օր. 140.1-րդ հոդվածն էլ սահմանում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով:

Այսպիսով,

ա) քաղաքացիական դատավարությունում գործի վարույթը կարճելու մասին ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը կայացնում է **վճիռ**.

բ) քաղաքացիական դատավարությունում գործի վարույթը կարճելու մասին դատարանի վճիռը գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ է.

<sup>1</sup> Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, Երևան, 2003, էջ 415:

գ) քաղաքացիական դատավարությունում գործի վարույթը կարճելու մասին դատարանի վճռը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով:

ՀՀ քրեական դատավարությունում նույնպես գործի վարույթը կարճելու մասին դատարանի որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ է, որը կարող է բողոքարկվել վերաքննության կարգով:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10.1-րդ կետի համաձայն՝ **գործն ըստ էության լուծող դատական ակտեր են՝** առաջին ատյանի դատարանի դատավճիռը, **քրեական գործով վարույթը կարճելու** կամ քրեական հետապնդումը դադարեցնելու **մասին որոշումը...**:

ՀՀ քր. դատ. օր. 376.1-րդ հոդվածի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են՝

1) առաջին ատյանի դատարանների՝ գործն ըստ էության լուծող օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերը...:

Վերը շարադրված նորմերի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ քրեական դատավարությունում նույնպես գործի վարույթը կարճելու մասին որոշումը՝

ա) **գործն ըստ էության լուծող դատական ակտ է (այլ ոչ թե գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ),**

բ) **այն ենթակա է բողոքարկմանն վերաքննության կարգով:**

Ի տարբերություն քաղաքացիական և քրեական դատավարությունների, ինչպես արդեն նշել ենք, վարչական դատավարության օրենսդրությունը վարչական գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի տեսակ է սահմանել ոչ թե վճիռը, այլ՝ որոշումը: Այլ կեպ ասած՝ վարչական գործը կարճելիս վարչական դատարանը կայացնում է ոչ թե վճիռ, այլ՝ որոշում: Այս իմաստով, վարչական դատավարությունում գործի վարույթը կարճելու մասին որոշումը գործն ըստ էության չլուծող, միջանկյալ դատական ակտ է:

Այսպիսով գտնում ենք, որ **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին դատարանի որոշումն իր էությամբ ոչ թե գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտ է, այլ՝ գործն ըստ էության լուծող վերջնական դատական ակտ՝ վերջինիս բնորոշ դատավարական հատկանիշներով ու իրավական հետևանքներով:**

Սա նշանակում է, որ քաղաքացիական գործի վարույթը կարճելու մասին վճռի իրավական հետևանքներից մեկն է հանդիսանում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ **դատարանի վճռով հաստատված փաստերի նախադատելիությունը:** Այսինքն՝ գործի վարույթը կարճելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատված հանգամանքները նույն անձանց միջև դատարանում այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

**Ուստի, Կենտրոնը գտնում է, որ նշված քաղաքացիադատավարական նորմին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին, ինչպես նաև խախտում է անձի դատական պաշտպանության իրավունքը:**

Դիմողի կողմից վիճարկվող ՀՀ քաղ. դատ. օր. 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի սահմանադրականությունը ևս անհրաժեշտ է դիտարկել իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

Իրավական որոշակիության վերաբերյալ վերը շարադրված մեկնաբանություններից ելնելով՝ կարծում ենք, վիճարկվող ՀՀ քաղ. դատ. օր. 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում *«համեմատական վերլուծություն»* ձևակերպման բովանդակությունը ինչպես այդ հոդվածի, այնպես էլ դրան առնչվող համապատասխան իրավակարգավորումների շրջանակներում չի բացահայտվում, ինչը հանգեցնում է այդ ձևակերպման անհստակությանը: Նշված ձևակերպման անհստակության պատճառով իրավունքի իրացնողը զրկվում է իր վարքագիծն այդ իրավանորմին համապատասխան դրսևորելու հնարավորությունից, անկանխատեսելի է դարձնում իրավունքի իրացնողի իրավական ակնկալիքը՝ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան: Բանն այն է, որ իրավունքի իրացնողի համար հստակ չէ, թե ինչպես պետք է կատարի համեմատական վերլուծությունը վճռաբեկ բողոքում, ինչպես պետք է վկայակոչի և հիմնավորի վճռաբեկ բողոքում բողոքարկվող դատական ակտի և վճռաբեկ դատարանի որոշման միջև առկա հակասությունը՝ բողոքը վճռաբեկ դատարանի համար ընդունելի համարվելու և վերջինիս կողմից այն վարույթ ընդունելու համար:

Դիմողի կողմից մեջբերված դատական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ վճռաբեկ դատարանը *«համեմատական վերլուծություն»* չկատարված է համարում ինչպես վճռաբեկ բողոքում վկայակոչված դատական ակտերը բողոքին չկցելը և այդ ակտերից ու բողոքարկվող դատական ակտից համապատասխան մասերը չմեջբերելը, այնպես էլ բողոքում վկայակոչված դատական ակտերը բողոքին կցելը, դրանց հակասող մասերի մեջբերումը և վերլուծության կատարումը՝ այն համարելով ոչ բավարար:

Վիճարկվող իրավակարգավորման իմաստով համեմատական վերլուծության բավարարությունը գնահատելը վճռաբեկ դատարանի իրավասությունն է, իսկ թե ինչ չափանիշների և պայմանների հիման վրա է վճռաբեկ դատարանը գնահատում կատարված համեմատական վերլուծության *բավարարությունը* կամ *անբավարարությունը*, օրենսդրությամբ սահմանված չէ և թողնված է վճռաբեկ դատարանի հայեցողությանը: Ահա նման չափանիշների օրենսդրական կարգավորման վերաբերյալ համապատասխան դրույթների բացակայությունը մի դեպքում հնարավորություն չի տալիս իրավունքի իրացնողին հստակորեն շարադրելու ընդունման

ենթակա վճռաբեկ բողոք, մյուս կողմից վճռաբեկ դատարանին թույլ է տալիս կամայականորեն և առանց հիմնավոր և բավարար պատճառաբանության մերժելու վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը, ինչն իր հերթին անձին զրկում է դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքից:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

### **բ) Դատական պաշտպանության իրավունք**

Դատական պաշտպանության, արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

#### **Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

...

#### **Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը**

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

...

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

Հարկ է նշել, որ անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակության բաղկացուցիչ մասն է կազմում նաև **վերադասության կարգով դատական ակտերի**



**վերանայման ինստիտուտը:** Այդ կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում դատական ակտի բողոքարկման և վերադատության կարգով դրա վերանայման ինստիտուտը դիտարկել է արդար դատաքննության և արդարադատության մատչելիության իրավունքի բովանդակության շրջանակներում (տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 08.02.2011թ. թիվ ՍԴՈ-936 որոշում, կետ 5, ՀՀ սահմանադրական դատարանի 10.02.2015թ. թիվ ՍԴՈ-1190 որոշում, կետ 10):

ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը»:

15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հատուկ նշել է. «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա **դատական ակտերի վերանայման ինստիտուտի** ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով **ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը:** Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (restitutio in integrum): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

**...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը,**

**իրականացման կարգն ու պայմանները...»** (ընդգծումը կատարված է Կենտրոնի կողմից):

Նույն որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանը նշում է, որ ... վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ **օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով**, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն» (ընդգծումը կատարված է Կենտրոնի կողմից):

Կամ, ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետում օրենսդիրը փորձ է արել կանոնակարգելու վճռաբեկ բողոքին ներկայացվող պահանջներն այն դեպքում, երբ այն ներկայացվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով (վճռաբեկ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար)՝ *առանց հստակեցնելու մեջբերվող դատական ակտի և վճռաբեկ դատարանի որոշման մեջ տրված մեկնաբանությունների համեմատական վերլուծության կատարման չափանիշները, կարգը և պայմանները, այդ համեմատության կատարման խորությունն ու բավարարությունը:*

Հարց է առաջանում, թե արդյո՞ք այդպիսի կարգավորումը բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից և երաշխիքներից:

Այս կապակցությամբ հարկ ենք համարում մեջբերել նաև Եվրոպական դատարանի դիրքորոշումը, համաձայն որի՝ «Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և **կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ**, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել կախված ժամանակից և

տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջումներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, **եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն**<sup>1</sup>:

Ըստ Եվրապական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

**Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ:** Հարցը

<sup>1</sup> Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Phillis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»<sup>1</sup>:

Վերոշարադրյալից ելնելով՝ գտնում ենք, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները, կապված վճռաբեկ բողոքի բովանդակության և դրանով պայմանավորված՝ այն վարույթ ընդունելու հարցը լուծելու հետ, խախտում է անձի դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության իրավունքն այնքանով, որքանով օրենքով **հստակ և անձանց համար միակերպ ընկալելի կերպով** նախատեսված չէ համապատասխան հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքում **համեմատական վերլուծություն** կատարելու չափանիշները, կատարված վերլուծությունների հիմնավորումների բավարարությունը որոշելու պայմանները և կարգը, ինչն իր հերթին հանգեցնում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնման անհնարինության: Նման անհստակությունն ինքնին հանգեցնում է իրավակիրառական պրակտիկայում նշված նորմի տարաբնույթ մեկնաբանությունների՝ խախտելով անձի դատական պաշտպանության իրավունքը:

Վիճարկվող դրույթը մի կողմից անձին զրկում է դատարանի ոչ իրավաչափ դատական ակտը բողոքարկելու իրավունքից, մյուս կողմից՝ ստորադաս դատարանի ոչ իրավաչափ դատական ակտով իր խախտված կամ սահմանափակված իրավունքը վերականգնելու հնարավորությունից:

Այսպիսով, կարծում ենք, խնդրո առարկայի առնչությամբ անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու ուղղությամբ **պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պետության պոզիտիվ պարտականությունը բավարար կատարված համարել չի կարելի**: Մասնավորապես, մի կողմից, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով վճռաբեկ բողոք բերելու իրավունքի սահմանափակումը, մյուս կողմից՝ համապատասխան հիմքով ներկայացված վճռաբեկ բողոքում համեմատական վերլուծության կատարման անորոշությունը, համապատասխան չափանիշների, կարգի և պայմանների բացակայությունը, իբրև իրավակարգավորման բաց, վիճահարույց է:

Օրենսդրական բացի սահմանադրականության կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 14.09.2010թ. թիվ ՍԴՌ-914 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը

<sup>1</sup> ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՌ-719, 6-րդ կետ:

հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՛ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ **նորմատիվ պատվիրանի բացակայությամբ**, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Զարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

Սույն սահմանադրական վեճի առարկա հանդիսացող քաղաքացիադատավարական նորմը, արգելափակելով անձի դատական պաշտպանության իրավունքը վճարել բողոք բերելու իրավունքն իրացնելիս, դրանով իսկ չի ապահովում անձի դատական պաշտպանության և արդարադատության մատչելիության սահմանադրական իրավունքի իրականացումը: Ուստի, այս պարագայում, կարծքում ենք, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա է Սահմանադրական դատարանի քննությանը:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

**Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.**

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ մասին իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությունը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է,

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

Կենտրոնի համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան